

5.5. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության վերահսկողության մոնիտորինգ

5.5.1. Օդային ավազանի վիճակի վերահսկողություն: Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տարեկան տեղեկագրի, 1999թ. մթնոլորտի աղտոտվածության վիճակի հսկողություն է իրականացվել Երևան, Արարատ, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի և Հրազդան քաղաքներում տեղակայված 11 մշտական լաբորատոր դիտակայանների և 3 քիմիական լաբորատորիաների միջոցով: 1999թ. ընթացքում կատարվել է մթնոլորտային օդի 26238 փորձանմուշների 26984 փորձազննում (1998թ. համապատասխանաբար 31564-ի և 33607-ի դիմաց), որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի և երկօքսիդի, քլորի, քլորոպրենի, բենզոլի, տոլուոլի, քսիլոլի և էթիլբենզոլի պարունակությունները: Գերազանցվել են վերահսկվող 11 (1998թ. 12-ի դիմաց) մթնոլորտային աղտոտիչ նյութերից 4-ի պարունակության առավելագույն սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ): Վերահսկվող աղտոտիչ նյութերի բարձր աղտոտվածության (ՍԹԿ գերազանցում 10 և ավելի անգամ) դեպք չի արձանագրվել:

- Երևանում տեղակայված 5 դիտակայանից գործել են 3-ը (1998թ. համապատասխանաբար 6-ի և 4-ի դիմաց): Քաղաքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրներն են ավտոտրանսպորտը, արդյունաբերական օբյեկտները, ՋԷԿ-ը, կաթսայատները: 1999թ. ընթացքում քաղաքի մթնոլորտում ածխածնի օքսիդի և ֆորմալդեհիդի պարունակության չափումներ չեն կատարվել: Օդի 10268 հետազոտված փորձանմուշների 11014 փորձազննման միջոցով (1998թ. համապատասխանաբար 11503-ի 13546-ի դիմաց) որոշվել են 10 աղտոտիչ նյութերի կոնցենտրացիաները: Փորձանմուշներից 3103-ում կամ 30.2 %-ում (1998թ. 2590-ի կամ 22.5 %-ի դիմաց) արձանագրվել է փոշու և ազոտի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ գերազանցում: Փոշու փորձանմուշների 51 %-ում առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.4 անգամ, իսկ ազոտի երկօքսիդի փորձանմուշների 94 %-ում՝ 3.9 անգամ: Փոշու միջին տարեկան ՍԹԿ-ն գերազանցվել է 4.7 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.8, ծծմբի երկօքսիդինը՝ 2.4, բենզոլինը՝ 1.7 և ազոտի օքսիդինը՝ 1.3 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³		1999թ. կոնցենտրացիաները 1998թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %	
	առավելագույն	միջին տարեկան	առավելագույն	միջին տարեկան
Փոշի	2.2	0.7	- 4.4	116.7
Ծծմբի երկօքսիդ	0.3	0.12	1.4 անգամ	109.1
Ազոտի օքսիդ	0.16	0.08	- 44.8	- 11.1
Ազոտի երկօքսիդ	0.33	0.15	- 19.5	- 16.7
Քլոր	0.02	0	- 33.3	0
Բենզոլ	0.541	0.175	- 0.4	- 1.1
Տոլուոլ	0.412	0.11	- 1.2	- 9.1

- Արարատ քաղաքում մթնոլորտն աղտոտող հիմնական աղբյուրը ցեմենտի արտադրությունն է: Քաղաքում մշտապես գործող մեկ դիտակայանի միջոցով 1999թ. ընթացքում կատարվել է փոշու պարունակության որոշման 918 փորձազննում՝ նախորդ տարվա 798-ի դիմաց: Ըստ փորձազննման արդյունքների, քաղաքի օդի 918 փորձանմուշներից 444-ում կամ

48.4 %-ում (1998թ. 459-ի կամ 57.5 %-ի դիմաց) արձանագրվել է ՍԹԿ գերազանցում: Ցեմենտի փոշու առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները գերազանցվել են համապատասխանաբար 4.7 և 4.0 անգամ և կազմել 1.4 և 0.4 մգ/մ³: Նախորդ տարվա համեմատ ցեմենտի փոշու կոնցենտրացիաները նվազել են:

- Ալավերդի քաղաքում տեղակայված 2 մշտական դիտակայանների միջոցով որոշվել են փոշու, ածխածնի օքսիդի, ծծմբի և ազոտի երկօքսիդների պարունակությունները մթնոլորտում: Քաղաքի մթնոլորտային օդի 5751 փորձանմուշներից (1998թ. 6075-ի դիմաց) 44-ում կամ 0.8 %-ում (1998թ. 230-ի կամ 3.8 %-ի դիմաց) արձանագրվել է ծծմբի և ազոտի երկօքսիդների առավելագույն ՍԹԿ գերազանցում: Ծծմբի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.6 անգամ, իսկ միջին տարեկան ՍԹԿ-ն՝ 1.8 անգամ: Դիտվել է նաև ազոտի երկօքսիդի առավելագույն և փոշու միջին տարեկան ՍԹԿ-ների աննշան գերազանցում:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³		1999թ. կոնցենտրացիաները 1998թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %	
	առավելագույն	միջին տարեկան	առավելագույն	միջին տարեկան
Փոշի	0.4	0.2	100	2 անգամ
Ծծմբի երկօքսիդ	0.81	0.09	- 76	- 57.1
Ածխածնի օքսիդ	5	2	125	2 անգամ
Ազոտի երկօքսիդ	0.09	0.03	- 25	100

- Վանաձոր քաղաքում տեղակայված 4 դիտակայաններից գործել են 3-ը, որոնց միջոցով վերցվել է քաղաքի մթնոլորտային օդի 8247 փորձանմուշ (1998թ. 13188-ի դիմաց), որոշվել են փոշու, ածխածնի օքսիդի, ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաները: Փորձանմուշներից 72-ում կամ 0.9 %-ում (1998թ. 262-ի կամ 2.0 %-ի դիմաց) գրանցվել է փոշու, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ գերազանցում: Փոշու և ածխածնի օքսիդի առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են 1.2 անգամ, ազոտի երկօքսիդին՝ 1.1 անգամ: Ծծմբի երկօքսիդի և փոշու միջին տարեկան ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 1.6 և 1.3 անգամ:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին տարեկան կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³		1999թ. կոնցենտրացիաները 1998թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %	
	առավելագույն	միջին տարեկան	առավելագույն	միջին տարեկան
Փոշի	0.6	0.2	- 75	100
Ծծմբի երկօքսիդ	0.25	0.08	- 47.9	2 անգամ
Ածխածնի օքսիդ	6	2	- 40	- 33.3
Ազոտի երկօքսիդ	0.09	0.03	100	1.5 անգամ

- Գյումրի քաղաքում տեղակայված մեկ դիտակայանի միջոցով 1999թ. ընթացքում կատարվել է քաղաքի մթնոլորտային օդում փոշու պարունակության որոշման 615 փորձազննում: Փոշու միջին տարեկան և առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են մինչև 4 անգամ:

- Հրազդան քաղաքում տեղակայված մեկ դիտակայանի միջոցով վերցվել է օդի 439 փորձանմուշ, որոնց մեջ որոշվել է ցեմենտի փոշու կոնցենտրացիաները: Փոշու առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 3.6 անգամ, իսկ միջին տարեկանը՝ 2 անգամ:

5.5.2. Մակերևութային ջրերի մոնիտորինգ: Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տարեկան տեղեկագրի, 1999թ. հանրապետության 12 գետերի, Սևանա լճի և Արփա-Սևան ջրատարի ջրի որակական հսկողություն իրականացնող 45 (1998թ. 55-ի դիմաց) վերահսկման հատվածներից վերցված 140 (1998թ. 133-ի դիմաց) փորձանմուշներում կատարվել է ջրերի աղտոտիչների կոնցենտրացիաների որոշման 3753 փորձագնում (1998թ. 3712-ի դիմաց):

Բարձր աղտոտվածության դեպքեր դիտվել են Հրազդան գետում (նիտրիտների իոնների ՍԹԿ գերազանցում 12 անգամ) և Սևանա լճի թերակղզու շրջանում (պղնձի իոնների և նավթամթերքի ՍԹԿ-ների գերազանցում համապատասխանաբար 32 և 90 անգամ):

Ամոնիումի իոնների միջին տարեկան ՍԹԿ-ն Հրազդան գետի գետաբերանի մոտ գերազանցվել է մինչև 5.5 անգամ, իսկ Դեբեդ գետում, Գավառագետում և Արփա-Սևան ջրատարում՝ մինչև 3 անգամ:

Նիտրիտների իոնների միջին տարեկան ՍԹԿ-ն գերազանցվել է Գավառագետում և Դեբեդ գետում՝ 2.2-4.2 անգամ:

Նավթամթերքի միջին տարեկան ՍԹԿ-ն Սևանա լճի թերակղզու մոտ գերազանցվել է 26.8 անգամ, Հրազդան գետում՝ 3.2 անգամ, Սևանա լճում և առափնյա գետերում՝ 1.6-8.8 անգամ:

Պղնձի իոնների միջին տարեկան ՍԹԿ-ն Սևանա լճի թերակղզու շրջանում գերազանցվել է 23 անգամ, Հրազդան գետում և Սևանա լճի ավազանի գետերում՝ 7-17 անգամ:

Վերահսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաներն եղել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Նախորդ տարվա համեմատ Հրազդան գետում դիտվել է նիտրիտների իոնների կոնցենտրացիայի աննշան ավելացում, իսկ Սևանա լճի ավազանի գետերում՝ նավթամթերքի կոնցենտրացիայի նվազում: